

ԵԱՀԿ ԽՐԱՆՈՒՄ Է ՊԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԻ ՄԱՍԻՆԱԿցՈՒԹՅՈՒՆԸ



Գ. Հարությունյան ՀՅ սահմանադրական դատարանի ճախազահ, Ա. Չոփրայան ՀՅ փաստաբանների պալատի փոխնախազահ, Ա. Օրբելյան ՀՅ արդարադատության փոխնախարար, դեկտեմբերի 4, 2012թ. (ԵԱՀԿ/Գայանե Տեղ-Ստեփանիանյան)

2012ρ. ηεκιτειδρειρή 4-ին ԵԱՀԿ երևանյան գրասենյակը (այսուհետ՝ «գրասենյակ») ՀՀ փաստարանների պալատի հետ համատեղ կազմակերպեց քննարկում՝ ներպետական և միջազգային դատավարություններում երրորդ կողմի մասնակցության վերաբերյալ, շեշտադրելով Հայաստանում *amicus curiae* («դատարանի բարեկամ») համառոտագրերի ներկայացումը: ՀՀ դատական համակարգի, արդարադատության նախարարության, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները քննարկեցին մարդու իրավունքներով գրադրու միջազգային կազմակերպությունների, ներառյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու պրակտիկան այդ առնչությամբ: Քննարկվեցին նաև ՀՀ փաստարանների պալատի գիտավելուուժական կենտրոնի կողմից ՀՀ սահմանադրական դատարանին ներկայացրած գրավոր դիտարկումները:

դատարաններին, ինչպես նաև միջազգային առյաններին *amicus curiae* համառոտագրերի ներկայացման նրանց փորձին և պրակտիկային ծանրանալու նպատակով: Այցը կազմակերպվել էր «Խնտերայք» ՀԿ-ի և ՀՀ փաստաբանների պալատի գործընկերությամբ և ուղղված էր Հայաստանի իրավապաշտպաններ իրազեկվածության բարձրացմանը և կարողությունների հզորացմանը՝ ներպետական ու միջազգային դատավարություններում ներգրավվածությունը դյուրացնելու համար: Այցը հաստատեց նաև այս ոլորտում մասնագիտական կապերի ընդլայման և ուսուցողական հնարավորությունների օգտակարությունը:

Գրասենյակը աշխատում է խրախուսել *amicus curiae* սկզբունքի կիրառումը Հայաստանում՝ դատական որոշումների արդյունավետության բարձրացմանը օժանդակելու նպատակով և օգնել հղորացնելու փաստաբանների, իրավապաշտպանների և քաղաքացիական հասարակության կարողությունները՝ տեղեկություններ ներկայացնելու դատարաններին, այդ թվում գործի հնարավոր ազդեցությունը եղողորդ կողմի վրա:

Բանավեճերի խրախուսումը երիտասարդների շրջանում



Երևանի և Գավառի հավթող թիմերը Զինհշյան հիշտառակի հիմնադրամի կողմից ԵԱՀԿ աջակցությամբ կազմակերպված համալսարանական բանավեճի ժամանակ, նոյմերի 21, 2012թ. (ՂՀՀ/Սատուր Եսայանց)

Գրասենյակի աջակցությամբ Զինհշյանի հիշատակի հիմնադրամը ստեղծել է համալսարանական բանավեճերի ակումբներ Գյումրի, Վանաձոր, Խջևան, Գավառ, Կապան, Գորիս և Երևան քաղաքների յոթ համալսարաններում՝ յուրաքանչյուր ակումբում ներառելով առնվազն 40 ակտիվ ուսանող: Ուսանողները մասնակցել են մի շաքր ուսումնական սեմինարների և հենարավորություն են ունեցել գործնականում կիրառել իրենց ծեռք բերված հմտությունները և գիտելիքը միջրուկական բանավեճերում: Ամփոփիչ երկօրյա ազգային մրցույթը անցկացվեց Երևանում՝ 2012թ.-ի նոյեմբերին՝ յոթ բուհերի հիմք լավագույն ուսանողներից կազմված թիմերի համար: Հաղթողները ստացան շքանշաններ և մասնակցության վկայագրեր: Ի լրումն, «Երևանի մետիա» հե-

լուսաւալիքով զավակալված մլաք ուղղութափառական, որտեղ ուսանողները քննարկեցին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի դերը, կանանց մասնակցությունը ընտրություններում և համացանցի ռեսուլուսների նկատմամբ վերահսկողությունը:

Երկու այլ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև ՀԿ-ների և կառավարության ներկայացուցիչների հետ միասին գրասենյակը մասնակցեց նաև 2013-2017թ.-ի Երիտասարդական ազգային ռազմավարության մշակման աշխատանքային խմբի աշխատանքներին: Որպես ռազմավարության հիմնական գերակայություններ ընդունվեցին զրադարձության հարցերը, սոցիալ-տնտեսական պայմանները և երիտասարդների մասնակցությունը, ինչպես նաև բարձրագույն և հոգևոր-մշակութային կրթությունը: Ռազմավարության նախագիծը քննարկվել է բոլոր շահառուների հետ և հաստատվել ՀՀ Ազգային ժողովի 2012թ.-ի դեկտեմբերի նիստում:

Կլոր սեղան միջխորհրդարանական համագործակցության և դիվանագիտության հարցերով

2004թ.-ից գրասենյակը աջակցում է ՀՀ Ազգային Ժողովին՝ փորձի փոխանակման հնարավորություններ ընձեռելով թե՛ ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմին և թե՛ պատգամավորներին: Այս աշխատանքի շրջանակում ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ 2012 թ.-ի դեկտեմբերին Ծաղկաձորում կազմակերպվեց կլոր սեղան՝ միջխորհրդարանական համագործակցության և դիվանագիտության հարցերով: Սիցոցառմանը ներկա էին մի շարք միջխորհրդարանական գործադիր մարմինների ներկայացուցիչներ, ԱԺ փոխխոսնակը և Հայաստանի բարձրաստիճան դիվանագետներ. նորմետիր պատգամավորներին փորձի փոխանակման հնարավորություն ընձեռնվեց՝ միջխորհրդարանական այնպիսի հաստատությունների, ինչպիսիք են՝ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի (ԵԱՀԿ ԽՎ), ԵԽԽՎ-ի, ՆԱՏՕ ԽՎ-ի, ԵՎՐՈՍԵՍ ԽՎ-ի, ԱՊՀ ԽՎ-ի և ՀԱՊԿ ԽՎ-ի դերի և գործառույթների վերաբերյալ: Սիցոցառման ընթացքում քննարկվեցին նաև խորհրդարանական դիվանագիտության հարցերը:

ԵԱՀԿ ամրապնդում է կանանց մասնակցությունը քաղաքականության մեջ



Կանանց խմբերը տեղեկանում են կանանց ներգաղացածությանը նախասող ԵԱՀԿ նոր ծրագրի մասին, հունիսի 25, 2012թ. (ԵԱՀԿ/Գայանե Տեր-Ստեփանյան)

Տնտեսական և քաղաքական բնագավառներում, ինչպես նաև հանրային կյանքում կանանց մասնակցության խրանումը կարևոր գործուն է ժողովրդավարական առաջընթացն ապահովելու համար: Այդ նպատակով 2012 թ.-ի հունիսին ԵԱՀԿ մեկնարկեց մի շաբաթական ամսանական շրջանակությունը կանանց առաջնարկությունը կայացնելու համար՝ Հայաստանի 2012 թ.-ի և 2013 թ.-ի ՏԻՄ և նախագահական ընտրություններին ընդառաջ: Հոլանդիայի կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիրը ընդունվել է աշխատանքների լայն շրջանակությունում կանանց առաջնարկությունը կայացնելու համար: Որպես առաջնորդների, որոշումները կայացնողների և թեկնածուների առաջխաղաղման լավագույն փորձը, գեղեցիկ հարցերով քաղաքական հարթակի ստեղծման, արդյունավետ քարոզարշավի, լրատվամիջոցների հետ աշխատանքի թեմաներով:

Որպես առաջին դրական արդյունք, զգալիորեն մեծացել է կանանց ներկայացվածությունը տեղական կառավարման խորհրդներում: Եթե Հայաստանում տեղական մակարդակում կանանց ներկայացվածությունը միշտնում 2% է, ապա Սյունիքում, որտեղ գրասենյակը արդեն մի քանի տարի աջակցում է Կանանց ռեսուրսների կենտրոններին, ավագանու խորհրդի նորընտիր անդամների 17%-ը կանայք են: Տեղական ընտրություններում ընտրվեց ԵԱՀԿ-ի ծրագրի շահառուներ հանդիսացող կին թեկնածուների 68%-ը (37-ից 25-ը):

Մարդու իրավունքների օրվա միջոցառումներ



«Իրավան իրավունքներ վիրտուալ կյանքում» Մարդու իրավունքների կինոփառասեղ 2-րդ մրցանակալիք, դեկտեմբերի 2, 2012թ. (Գ. Տեր-Ստեփանյան)

Մարդու իրավունքների միջազգային օրը նշելու նպատակով ԵԱՀԿ-ի կողմից աջակ ցվող միջոցառումների թվում էին 2012 թ.-ի դեկտեմբերի 10-ին և 11-ին Երևանում ու Վանաձորում ողբաներով, մարդու իրավունքները քվային դարաշրջանում ֆիլմերի փառատոնը, երիտասարդների բանավեճը և դատախաղը-մրցույթը: Դեկտեմբերի 11-ին «Որդան կարմիր», «Բամբիո», «Դոկմա» և «Լավ էլի» ողբաները համերգ տվեցին Վանաձորում: Համերգը, որը երրորդ անգամ էր անցկացվում, դարձել է համամարդկային մարդու իրավունքների և խաղաղության արժեքների խրանման ավանդույթը:

Մարդու իրավունքների մասին ֆիլմերի փառատոնի մրցանակները շնորհվեցին միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված ժյուրիի կողմից: առաջին մրցանակը տրվեց «Homo Habilis» ֆիլմին, երկրորդ մրցանակը ստացավ «Իրավան իրավունքներ վիրտուալ կյանքում» ֆիլմը: «YouTube»-ում քվեարկողները առաջին մրցանակը շնորհեցին «Սուտք» ֆիլմին, իսկ երկրորդ մրցանակը՝ «Բնացիր քո իրավունքները քվային դարաշրջանում»:

Սիցոցառումները կազմակերպվել են ՍԱԿ-ի, ԵՄ-ի, ԵԽ-ի, ՍԻՊ-ի և ՀՀ ԱԳՆ-ի հետ համատեղ:

Հայաստանի մարզերի և Երևանի միջանակարգ դպրոցների 30 աշակերտներ մասնակցեցին դատախաղ-մրցույթին, որը կազմակերպել էր ՀՀ նարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը՝ ԵԱՀԿ գրասենյակի աջակցությամբ:



«Բամբիո» ողկինոմիք մարդու իրավունքների օրվա կապակցությամբ Վանաձորում կազմակերպված համերգի ժամանակ, դեկտեմբերի 11, 2012թ. (ԵԱՀԿ/Գայանե Տեր-Ստեփանյան)

Ոստիկանություն - լրատվամիջոցներ համաժողով

2012 թ.-ի հոկտեմբերի 20-21-ին կազմակերպվեց ոստիկանությանը և լրատվամիջոցներին առնչվող հարցերով երկօրյա համաժողով, որն ուղղված էր նաև միջազգային արդյունավետ գործընկերության խրախուսմանը: Մամուլի մոտ 30 ներկայացուցիչներ և ոստիկանության 20 աշխատակիցներ քննարկեցին այնպիսի խնդրահարուցույց ոլորտների լուսաբանումը, ինչպիսիք են քրեական գործերի նախաքննությունը, անշափահասների մասնակցությամբ քրեական գործերը, երթևեկության անվտանգությունը և քննադեղերի բրաֆիկները: Կոտույցում ԵԱՀԿ առաքելության փորձագետ Դուշկո Զավիշը իր փորձով կիսվեց ներկաների հետ:

Հայաստանի պատվիրակության այցը ՉՈՒԺՎ, Ժնև

ՀՀ-ում զինված ուժերի /ՉՈՒ/ նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հետագա ընդլայնումը խթանելու համար գրասենյակը՝ Ժնևի զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության կենտրոնի (ՉՈՒԺՎ) հետ համատեղ 2012թ.-ի նոյեմբերի 17-22-ին կազմակերպեց Հայաստանի պատվիրակության ուսայցը Շվեյցարիա: Հայաստանի պատվիրակության կազմում էին ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ոստիկանության և ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի ներկայացողիներ:

Այցի նպատակն էր Հայաստանի պաշտոնատարներին ծանոթացնել ՉՈՒԺՎ-ի՝ որպես հաստատության, դրա առաքելության, աշխատանքների շրջանակի և փորձի հետ, ինչպես նաև ընդգծել ՉՈՒ ժողովրդավարական վերահսկողության դերը, որպես ժողովրդավարական արժեքներ ունեցող պետություն ստեղծելու անբաժանելի գործունեություն: Դրան հաջորդեց 2012թ.-ի դեկտեմբերին ՉՈՒԺՎ քարձրաստիճան պատվիրակության այցը Հայաստան՝ ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի հետ մտադրությունների արձանագրությունը ստորագրելու համար:

Հանրային քննարկումներ ցմահ դատապարտյալների մասին

Գրասենյակը՝ Հայաստանի Հելսինկյան կոմիտեի հետ համագործակցությամբ, մեկնարկեց ցմահ դատապարտյալների խնդիրները հանրային քննարկումներում վերհանելու ծրագիրը: Աշխատանքներն ընդգրկում էին առանձին հանդիպումներ քաղաքացիական հասարակության և քաղաքական կուսակցությունների հետ, ինչպես նաև հեռուստաքննարկում, որին մասնակցեցին պետական աստյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Ծրագիրը իրականացվեց ցմահ դատապարտյալների հարցերով գրաղվող քաղաքացիական նախաձեռնության հետ սերտ համագործակցությամբ, որը քայլեր է ձեռնարկում ցմահ ազատազրկման դատապարտված անձան գործերի վերանայումը և պայմանական վաղաժամկետ ազատումը խթանելու համար:

Ի լրումն, 2012թ.-ի նոյեմբերի 21-ին գրասենյակը՝ Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի հետ միասին հանաֆիճանասավորեց ցմահ դատապարտյալների հարցերով երկօրյա միջազգային համաժողով՝ ցմահ ազատազրկման նշանակման և կիրառման, պայմանական վաղաժամկետ ազատման, պրոբացիայի և ազատմանը նախապարաստելու հարցերը քննարկելու համար: Համաժողովի արդյունքում նշակվեցին առաջարկներ և օրենսդրական փոփոխությունների նախագծեր:

Օրիուս կենտրոնների տարեկան ժողով

2012թ.-ի դեկտեմբերի 14-ին գրասենյակը Երևանի Օրիուս կենտրոնում կազմակերպեց Հայաստանում բոլոր Օրիուս կենտրոնների ներկայացուցիչների տարեկան ժողովը՝ 2012թ.-ին ծեռնարկված աշխատանքները ամփոփելու համար: Նշվեց, որ գործունեությունը ուղղված էր համայնքի իրավունքների մասին իրազեկվածության քարձրացմանը, հանրության մասնակցության աջակցությանը և շրջական միջավայրի և առողջության անվտանգության մասին գիտելիքի ընդլայնմանը: Կազմակերպվել և տեղական իշխանությունների, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ անց են կացվել մոտ 90 հանրային լսումներ՝ շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և համայնքի բյուջեների մասին, 300 սեմինարներ և կյոր սեղան-քննարկումներ, կրթական աշխատանքներ: Մասնակիցները վերապարաստվեցին նաև շրջակա միջավայրի մի շարք հրատապ հարցերով:

«Շրջակա միջավայր և անվտանգություն» (EnvSec) նախաձեռնության գործունեությունը Հայաստանում



Անտառային հրդեհների կառավարման վերաբերյալ կյոր սեղանի մասնակիցները, դեկտեմբերի 4, 2012 (ԵԱՀԿ/Գայանե Տեր-Ստեփանյան)

Գրասենյակը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ միասին և Հրդեհների մոնիթորինգի գորակ կենտրոնի գործընկերակցությամբ 2012թ.-ի դեկտեմբերին կազմակերպեց Անտառային հրդեհների կառավարման ազգային երկրորդ կյոր սեղանը՝ EnvSec նախաձեռնության շրջանակում: Սիցոցառման ընթացքում պե-

տական կառույցների, քաղաքացիական հասարակության և միջազգային համայնքի 40 ներկայացուցիչներ քննարկեցին Հայաստանում անտառային հրդեհների ռիսկի կառավարման գործող օրենսդրական, կարգավորող և կնաստիտուցիոնալ դաշտը, հրդեհների կառավարման գործողությունների ծրագիրը և այս ոլորտում պետական քաղաքականությունը և դրա իրականացման ռազմավարությունը:

2012թ.-ի նոյեմբերի 16-ին կայացավ Քաղաքացիական գործողություններ հանուն անվտանգության և շրջակա միջավայրի (ՔԳԱԸԸ) Փոքր դրամաշնորհների ծրագրի ազգային ընտրող խորհրդի նիստը և հաստատեց Երևանի, Սյունիքի և Արագածոտնի մարզերում իրականացվող 4 ծրագրերի առաջարկներ:



Շրջակա միջավայրի և մարդու անվտանգության վրա վտանգավոր ազդեցություն ունեցող բունակությունների և թմբիստաների գերեզմանցը Նորարարչենում (ԵԱՀԿ/Եղիշարդ Սահակյան)

ՆՈՐ ՅՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ/ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զինված ուժերում /ԶՈՒ/ առաջնորդության դասագիրք

Գրասենյակը համարում է, որ ԶՈՒ-ում մարդու իրավունքների վրա ազդող ամենակարևոր գործոններից մեկը սպաների կրթական մակարդակն է: Վերջինիս կապը բանակում կարգապահության և բարոյական միջավայրի հետ ակնհայտ դարձավ Հայաստանում տարբեր կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի արդյունքում: Հետևաբար, առաջնորդության հմտությունների և կառավարման կարողությունների խրանումը հանդիսանում է ԶՈՒ-ում բարեփոխման գործընթացի առանցքային տարրերից մեկը: Այդ նպատակով գրասենյակի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կազմաձևված 2012թ.-ի համագործակցության ծրագրի շրջանակում մշակվել և հրատարակվել է նոր դասագիրք՝ ԶՈՒ-ում առաջնորդության վերաբերյալ: Ի լրումն, նախաձեռնվեցին մի շաբաթ դասախոսություններ միջին մակարդակի հրամանատարական կազմի համար՝ դասագրքի ներկայացման և հետադարձ կապի ապահովման նպատակով: Այս նոր դասագիրքը կմերառվի զինվորական հաստատությունների ուսումնական ծրագրերում և կնպաստի ուսուցողական գործընթացի արդիականացմանը և կապահովի մասնագիտական նոտեցում ԶՈՒ-ում:

Հայաստանում պրոբացիայի ծառայության ստեղծման հետազոտություն



Վ. Չոնտուլով (ձախից), ԵԱՀԿ ԵԳ-ի ՄՌ ծրագրի ղեկավարը ուսումնական ներկայացմանը, նոյեմբերի 12, 2012թ. (ԵԱՀԿ/Գայանէ Տեղ-Սերվիսային)

2012թ.-ի նոյեմբերի 12-ին Երևանում ներկայացվեց Հայաստանում պրոբացիայի ծառայության ստեղծման վերաբերյալ հետազոտությունը, որում վերլուծված է գործող օրենսդրությունը և պրակտիկան, միջազգային չափորոշիչները և ԵԱՀԿ մասնակից պետությունների լավագույն փորձը: Հետազոտությունը, որը գրասենյակի աջակցությամբ իրականացվել է «Սոցիալական արդարություն» ՀԿ-ի կողմից, ուղղված էր Հայաստանում քրեական արդարատության համակարգի բարեփոխումների խրանումը: Արդյունքները Հայաստանի իշխանությունների համար կարող են ծառայել որպես հիմք՝ կառավարության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմակարգական ծրագրին համահունչ պրոբացիայի ծառայության ստեղծման ռազմակարգություն մշակելու համար: Հետազոտությունը ներկայացնում է եվրոպական երկրների պրոբացիայի ծառայությունների տարբեր նորմեներ, վերլուծում է դրանց համեմատական առավելությունները և ներառում է պատկան մարմնների հետ անցկացված խորքային հարցազրույցների արդյունքները՝ դատապարտյան ներկայացմանը հետ իրականացվող վերականգնողական աշխատանքների վերաբերյալ: «Սոցիալական արդարություն» ՀԿ-ի խորհրդի նախագահ Արշակ Գասպարյանի կարծիքով պրոբացիայի ծառայության ստեղծումը կարող է նպաստել հանցագործությունների կամսարգելմանը, կրծատել կրկնահանցագործությունների թիվը, բարձրացնել ազատազրկման հետ շնչաված պատիժների կիրառելիությունը և երկարաժամկետ համատեքստում նպաստել հասարակության անվտանգությանը:



2013թ. ԵԱՀԿ նախագահող երկիր Ուկրաինայի արտաքին գործերի նախարար Լենինի Կոնֆարա (ԵԱՀԿ/Դոնիարան Փերֆեկը): ԵԱՀԿ նախագահությունը՝ 2012թ. ստանձնել էր Իոլանդիան: 2014թ. այն անցնում է Ծվեյցարիային, որին 2015թ. հաջորդելու է Մերիիան:

Տեղեկատվական վեճերի խորհրդի/SՎԼս/ կայքը և ժողովածուն

Գրասենյակն աջակցեց Տեղեկատվական վեճերի խորհրդի (SՎԼս) պաշտոնական կայքի (www.idcarmenia.am) ստեղծմանն ու SՎԼս-ի կարծիքների ժողովածուի (անգլերեն և հայերեն) (<http://www.osce.org/yerevan/98199>) իրատարակմանը: SՎԼս-ն 2011 թ. ստեղծված արտադատական մարմին է, որը պատրաստում և հրապարակում է խոսքի ազատության հետ կապված վեճերի վերաբերյալ կարծիքներ կամ հայտարարություններ և առաջարկում է այդ վեճերի լուծման արտադատական տարբերակներ: SՎԼս 19 կարծիքներից բաղկացած ժողովածուն և կայքէջը պատրաստվել են Տեղեկատվական ազատության կենտրոնի կողմից՝ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ՝ ԱՄՆ կառավարության կողմից փինանսավորված ծրագրի շրջանակներում:

Իրավական և դատական բարեփոխումների հեռուստաբաննարկում

Գրասենյակը՝ ՀՀ արդարադատության նախարարության հետ համագործակցությամբ, աջակցեց 2012թ.-ի հուլիսին ընդունած 2012-2016թթ. իրավական և դատական բարեփոխումների պետական ռազմակարգության դրույթների հեռուստաբաննարկմանը: Այն հեռարձակվեց 2012թ.-ի դեկտեմբերին և ուղղված էր ռազմակարգության ընդհանուր շրջանակի, դրա նպատակների և իրականացման ձևերի մասին հանրային իրազեկվածության բարձրացմանը և ըննարկումների խրանումը: Հիմնական ներկայացնողը՝ ՀՀ արդարադատության առաջին փոխնախարարն էր, իսկ ըննարկումներում՝ ներգրավված մյուս մասնակիցների քվում էին կառավարության ներկայացուցիչներ, փորձագետներ, քաղաքացիական հասարակության, ՀՀ փաստաբանների պալատի անդամներ և դատական դատավորներ:

ԵԱՀԿ մասին

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) գործում է հանուն 57 մասնակից պետությունների կայունության, բարօրության և ժողովրդական աշխատանքների միջոցով՝ հետամուտությունների կատարմանը:

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը հիմնադրվել է 2000 թվականին՝ օժանդակելու Հայաստանին ԵԱՀԿ առջև բոլոր երեք ուղղություններով՝ ռազմակարգական, տնտեսական և բնապահպանական մարդու իրավունքների կատարմանը:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ՝ Սունդուկյան 64/1, հեռ. 229610/11/12, էլ.փոստ՝ yerevan-am@osce.org, կայք՝ <http://www.osce.org/yerevan>